23 հունիսի 2016 թվականի N 751 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 338-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N 338-Ն որոշման N 2 հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

9.	Գետի ինքնամաքրման կարողության գնահատման մեթոդի և վերջինիս կիրարկման մեխանիզմների մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2021 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: